Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 881 - Ա
որոշման

«Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2022 թվականի
N 463-Ա որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԱՌԱՆՁՆԱՏՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման նպատակով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ գյուղում կառուցել թվով 14 առանձնատներ՝ պատերազմի հետևանքով զոհված կամ հաշմանդամ զինծառայողների ընտանիքներ, ինչպես նաև 5 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքների համար, որոնք տեղահանվել են Լեռնային Ղարաբաղից և չեն կարող վերադառնալ իրենց բնակավայրեր, ինչպես նաև կառուցել մանկապարտեզ Լեռնագոգ գյուղի բնակիչների երեխաների համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ գյուղ, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	719,310,000 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Պատերազմի հետևանքով զոհված կամ հաշմանդամ զինծառայողների ընտանիքներ, ինչպես նաև 5 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքներ,

		որոնք տեղահանվել են Լեռնային Ղարաբաղից և Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ գյուղի բնակիչներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի հունիսի 16-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 25-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ժամկետում նախատեսվում է կառուցել թվով 14 առանձնատուն և մանկապարտեզ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ գյուղում: Նախատեսվում է իրականացնել 2022 թվականի հունիսի 16-ից մինչև 2024 թ. դեկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում: 14 առանձնատան կառուցում՝ 477,460,000 դրամի չափով, մանկապարտեզի կառուցում՝ 241,850,000 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Տարածքի ուղղաձիգ հարթեցում՝ 14 առանձնատների և մանկապարտեզի կառուցման համար, 14 առանձնատան և մանկապարտեզի կառուցում՝ ներքին ջրամատակարարման և կոյուղու, գազամատակարարման, էլեկտրամատակարարման և ջեռուցման ցանցերի, արտաքին ինժեներական ցանցերի, անցկացման աշխատանքներ, ինչպես նաև ներքին հարդարման աշխատանքների իրականացում՝ 719,310,000 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, ՀՀ Արմավիրի մարզպետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

11.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ